### ՀՀ փաստաբանների պալատը աշխատանքի է հրավիրում փաստաբանների

15.07.2026 14:52

Հայաստանի Հանրապետությունում Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի ներկայացուցչության հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում **քաղաքացիություն չունեցող անձանց** իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատը աշխատանքի է հրավիրում փաստաբանների:

Ծրագրին ներգրավելու ցանկություն ունեցող փաստաբանները հավակնող անձինք կարող են շարժառիթային (մոտիվացիոն) նամակ ուղարկել deputychairman2@advocates.am էլ. փոստի հասցեին՝ կցելով մասնագիտական կարողությունների նկարագրմամբ ինքնակենսագրությունը (CV):

Ծրագրին ներգրավված փաստաբանի վարձատրությունը նախատեսվում է ամսեկան 560.000 ՀՀ դրամ (ներառյալ՝ հարկերը):

Ընտրության հարցում առաջնահերթությունը տրվելու է ոլորտում մասնագիտական փորձառություն և օտար լեզուների իմացություն ունեցող հավակնորդներին:

Նախապատվություն ստացած հավակնորդները կհրավիրվեն հարցազրույցի:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })